

ՄԱՆՈՒԴԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. տե'ս «Բազմավեր» 1956, թ. 1-2, էջ 28)

Հայոց սանդուղներուն տրուած չափերը կը տարբերին հելլենական համեմատութիւններէն: Մեր մէջ սանդուղի մը աստիճանին բարձրութիւնը հաւասար է նոյն աստիճանին լայնքին: Այս ձեւ կառուցուածքը՝ բնական է՝ վերելքը կ'ընէ յոգնեցուցիչ եւ դժուարին, բայց ասիկա սովորութեան խնդիր է:

Աստիճաններուն բարձրութիւնը անոնց լայնքին հաւասար ընելով, սանդուղին թեք դիրքը կ'ըլլայ 45 աստիճանի(1): Հայկական այս համեմատութիւնը պահուած է նոյնիսկ հելլեն-հռոմէական ոճով կառուցուած Գառնիի տաճարին վրայ, ինչ որ ցոյց կու տայ տեղական սովորութեան զօրութիւնը: Աստիճաններու բարձրութիւններն ալ մեր այժմեան սովորական աստիճաններու կրկինին կը հաւասարին, 29-30 հրդադր. բարձրութիւն մը, պարտաւորիչ կերպով: Եւ որպէսզի ոտքը լաւ մը իր տեղը դնէ աստիճանին վրայ՝ անոր լայնքը 25-30 հրդադր. էն պակաս չի կրնար ըլլալ: Այնպէս որ աստիճանին բարձրութիւնը կ'ըլլայ լայնքին հաւասար: Գառնիի մէջ աստիճաններու բարձրութիւնը 29 հրդադր. է:

Այս է պատճառը՝ որ թորամանեան ի դուր կը փնտռէ Անիի Գաղկաչէնի եւ կամ Հովուի եկեղեցիներուն վրայ մուտքի հա-

մար մասնաւոր սանդուղներ, մօտ մէկ մեդրոնոց հարթակը մազլցելու համար: Բայց եթէ նկատենք որ արդէն ժողովուրդը վարժած է բարձր աստիճաններէ վեր ելլելու, այս շէնքերուն շուրջ դռնուղ հարթակին երեք շարք աստիճանները ինքնին բաւական կ'ըլլան:


Սանդուղի մը աստիճանները միջոցի մը պարապութեանը վրայ կարելի է բռնել երկու ձեւով.

- ա) Իւրաքանչիւր աստիճան՝ իր երկու ծայրերէն պատերուն վրայ դնելով:
- բ) Իւրաքանչիւր աստիճան՝ իր մէկ ծայրէն պատին մէջ բռնելով, յառաջակարկառ (porte-à-faux) դիրքի մը մէջ:

Այս վերջին պարագային՝ աստիճանին վրայ եկած բոլոր ծանրութիւնը կը կեդրոնանայ աստիճանին մէկ ծայրին վրայ, որուն հատուածը (coupe) պէտք է բաւական զօրաւոր ըլլայ այս ծանրութիւնը կարենալ վերցնելու համար: Այս է պատճառը՝ որ մեր ճարտարապետութեան մէջ դորձածուած յառաջակարկառ սանդուղները շինուած են նեղ, մէկ անձի մը անցք տալու չափ, որպէսզի աստիճանին վրայ եկած ծանրութիւնը չառ չըլլայ:

ԺԱ. դարէն մինչեւ ԺԳ. դար՝ հայ ճարտարապետները կը դորձածեն բազմա-

ստացուի 3, 4, 5 համեմատութեամբ: Այսինքն՝ երեք չափ ուղղածիւր, չորս չափ հորիզոնական եւ հինգ չափ թեք: Այսպէսով սանդուղը կը ձեւացնէ ուղղանկիւն եռանկիւն մը, $3^2 + 4^2 = 5^2$: Մինչդեռ հայոց մէջ դոյացած եռանկիւնը՝ ուղղանկիւն հաւասարակազմ է $1^2 + 1^2 = 2$.



Պատ. 5. — Անիի մէջ տապալած հսկայ աշտարակի մը տեսքը: Նկարին ձախին՝ որոշապէս կը տեսնուի աշտարակին խոնջած եւ սանդուղէն հատուած մը: — Որպէսզի նման աշտարակ մը, առանց քայքայուելու տապալի լման, ի՞նչ էր ուրեմն հայ վարպետներուն դորձած չափին դադարները:

յարկ եկեղեցիներու համար՝ արտաքին սանդուղներ, յառաջակարկառ դիրքով:

Մինչեւ այդ ատեն, ընդհանուր ճարտարապետութեան մէջ առաջին անգամ ըլլալով կը տեսնենք հայկական շինութիւններու վրայ՝ բացառիկ թեթեւութիւն մը ցոյց տուող սանդուղներու կառուցում մը:

Այս սանդուղներուն աստիճաններու ներքեւի մակերեսը կը հետեւի՝ իր զծաղրութեամբը՝ աստիճաններու վերի մակերեսին զծաղրական շարժումին: Այս ձեւի շինութիւններու օրինակներ կը դրուենք Եղիաթաղի երկայարկ եկեղեցիին արտաքին սանդուղին մէջ, շինուած ԺԳ. դարուն: Այս սանդուղը այժմ մասամբ քանդուած է, սակայն դեռ կը մնան քանի մը աստիճաններ որմին կպած, որոնք մեղի ցոյց կու տան այս սանդուղին շինութեան ձեւը: Նոյն ձեւով շինուած են նաեւ Բուրթեի իշխանին Սմակուի մէջ շինել արւած եկեղեցիին երկրորդ յարկը բարձրացող սանդուղները ԺԳ. դարէն: Հոս՝ բացառիկ կ'երեւի շէնքը շինող ճարտարապետ-

տին ճիշդ, այս սանդուղներուն ներկայացուցած ճարտարաշինական ձեւը՝ շէնքին ճակատին ամբողջութեանը հետ համադրելու: Ուրիշ օրինակ մըն ալ կը գտնենք Զաքարեան շրջանէն՝ Հատիճավանքի ներքին սանդուղը, որ կը բարձրանայ դէպի իշխանական օթեակը:

Այս ձեւի սանդուղները, որոնց նախօրինակը աւելի հինքն է եւ յաճախ դորձածուած, աւելի կոշտ ձեւի մը տակ, զինուորական կառուցումներու մէջ, զուտ հայկական շինուածաձեւ մըն է, եւ իր կառուցումի ձեւովը, աստիճաններու կազմութեան չափովը կը կազմէ հայկական ոճին մէկ ինքնայատուկ ձեւը: Նոյն կան ոճին մէկ ինքնայատուկ ձեւը: Նոյն կան ոճին մէկ ինքնայատուկ ձեւը: Նոյն կան ոճին մէկ ինքնայատուկ ձեւը: Նոյն կան ոճին մէկ ինքնայատուկ ձեւը:

Այս ձեւով կառուցուած սանդուղները, իրենց թեթեւ եւ նրբին կերտուածքովը՝ դիւրաքանդ են, եւ երբ ամբողջ շէնքն է որ կը կործանի՝ անոնց փլատակները հաւանաբար անճանաչելի մնան դարեր վերջ եկող հնախօյրներուն: Հաւանաբար՝ նը-


(1) Հռոմայեցոց մօտ՝ բոտ վիթրիվի տուած կանոններուն (Գիրք ԾԳ., գլուխ Թ.), աստիճանին լայնքը կ'ըլլայ հաւասար անոր բարձրութեան $1 = p + 3 p$, որ կը համապատասխանէ Պիթագորեսի «Երեք կանոն»ին, այսինքն՝ սանդուղին թեք դիրքը կը

ման սանդուղներով օժտուած ըլլային Զուարթնոցը, Անիի Գաղկաչէն Ս. Գրիգորը:

Սանդուղներու հայկական այս ինքնուրոյն ոճին շինութիւնը կը կայանայ՝ քարէ երկու տախտակներու՝ մին հորիզոնական, միւսը ուղղաձիգ դիրքի մէջ իրարու վրայ շարելուն մէջ, ուղղանկիւն մը ձևացնելով: Այս տախտակները, բնական է, որմին մէջ բռնուած պիտի ըլլան իրենց մէկ ծայրէն: Այս երկու տախտակներուն իրարու հետ համադրութիւնը՝ կը կազմէ աստիճան մը, եւ այսպէս շարունակա-

բար, մինչեւ որ սանդուղը բարձրանայ վերի յարկը: Հոն՝ լայն սալաքար մը, ան ալ յառաջակարկառ դիրքով՝ որմին մէջ բռնուած, կը կազմէ Գալքիկը (palier):

Սանդուղի այս տեսակ աստիճանները կը շինուին նաեւ միակողմէ քարէ, ուղղանկիւնի տաշուածքով: Աստիճանին՝ պատէն դուրս յառաջակարկառ մասին տալով միայն հորիզոնական եւ ուղղաձիգ երկու թեւերը: Այս պարագային՝ որմին մէջ բռնուած մասը կը մնար քառանկիւնի հատուածով, որ աւելի ձեռնտու է որմը հիւսելու:



Պատ. 6. — Բուրթլու իշխանի՝ Ամաղուի երկայնակ եկեղեցին. նկատել արտաքին երկթեւ սանդուղը հայկական ոճով:

Ընդհանրապէս աստիճաններուն աղաւթ մնացած ծայրը՝ փողաքանդակով մը (rainure) զարդարուած եւ յղկուած կ'ըլլայ:

Սանդուղի հայկական ինքնատիպ այս դրութիւնը, շատ աւելի վերջերը, դէպի ԺԵ. դար, իր օրինակները ունեցաւ Եւրոպայի մէջ. մասնաւորաբար հիւսիսային Իտալիոյ մէջ, ուր դորձածուած քարերը եղան մարմարիոնի տախտակներ, ճերմակ, դեղին կամ վարդագոյն:

Լուսանի Մայր եկեղեցիին մէջ, ԺԵ. Լոզան, Յուլիս, 1955

դարէն, նման սանդուղի մը օրինակը կայ, թէեւ բաւական նախնական կառուցուածքով մը:

Լիոնի մէջ կառուցուելու վրայ եղող հայոց եկեղեցին զարդարուած պիտի ըլլայ նման զոյգ սանդուղներով:

Ս. ձեւԱՀԻՐՁԵԱՆ

ԱՆԴԱՄ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ
ՃԱՐՏԱՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՅԻՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1956, Թ. 1-2, էջ 22)

ԳԼՈՒԽ Բ.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԼԵԶՈՒՆ

1. ՅՈՒՆԱՐԵՆ: - 2. ԱՍՈՐԵՐԵՆ: - 3. ՀԱՅԵՐԵՆ:
4. ԽՕՍՈՒՆ ԲԱՐԲԱՌ: - 5. Ս. ԳՐԲԻ ԼԵԶՈՒՆ: -
6. ՀԱՅԵՐԵՆԸ ՅՈՒՆԱՐԵՆԻ ՀԵՏ:

1. — Յունարէն. — Հայերէն նշանադիրներու դիւտէն առաջ՝ մեր պաշտամունքի լեզուն երկու շրջան ունեցաւ. առաջինին մէջ կ'իշխէր յունարէնը, եւ երկրորդին՝ ասորերէնը: Հայաստանի աւետարանիչը Գրիգոր Լուսաւորիչ՝ մանկութենէն դաստիարակուած ի Կեսարիա Կապադովկացոց, ձեռնադրուած ի յունական լեզուով եւ կապադովկեան ձեւով, զորս կարող էր նորաձնունդ հայ եկեղեցոյ մէջ եւս: Միանգամայն փոյթ տարաւ ուսուցանել յունարէնը հայ պատանեկութեան՝ դրացի ասորերէնին հետ, վրէժ Ագաթանգեղոս.

«զոմանս յասորի դպրութիւն կարգեալ եւ զոմանս ի հելլէն» (625): Ասորերէնի պէտքը առաջ կու գար նոյն ազգի սրբազան մատենագրութեան կարեւորութենէն, զոր մեր ժառանգաւորները պէտք էին ուսումնիլ: Եւ եթէ հաւատանք Զենորի, Լուսաւորիչ իր հետ ասորի քարոզիչներ ալ կը բերէ (24). եւ ըստ Փաւստոսի՝ անոր աշակերտ եղած էր Դանիէլ քորեպիսկոպոս, եւ ասոր՝ Շաղիտա, երկուքն ալ ասորի (36, 218): Եւ անշուշտ այդ ասորիները իրենց լեզուով ալ կը վարէին: Ապացոյց Գլակայ վանքը, ուր մինչեւ 2 դարու վերջերը անոնք կը բնակէին. «եւ տունն այն, կը գրէ Յովհան Մամիկոնեան, ասորի գրով եւ պաշտամամք է վարեալ մինչեւ ի Թողլիկ», որ կը վտարէ Ասորիները ու կը հայացնէ ուխտը (59):

Սակայն յունարէնը կը շարունակէր ըլլալ մեր եկեղեցական լեզուն նաեւ Գրի-